գլխաւորն էր։ Քննութեան աւարտելէն և քննչին դառնալէն յետոյ պատրիարքարանը հրամայեց որ վանահօր ընտրութիւն կատարուի։ և միաբանութեան ժողովն ալ նոյն ինքն Օրմանեանը վանահայր ընտրեց 1883ին։ սակայն նոցա ունեցած պաշտօնը և ժամանակին պարագայքը չէին ներեր նոր պաշտօնը ըստանձնել. ուստի առժամեայ տեղապահ նշանակուեցաւ Ս. Կարապետի լուսարարապետ Յակոբ վարդապետ Քաջունի։ մինչև որ վանահայր մը ընտրուի։

Երկու տարի յետոյ 1885ին Արիստակէս եպիսկոպոս Գերձակեան վանահայր ընտրուեցաւ պատրիարքարանի կողմանէ։ սակայն նա ալ նախ իբր տեղապահ յետոյ իբր առաջնորդ Տիգրանակերտ փոխադրուեցաւ և Ս. Կարապետի բարեկարգութեան գործը նորէն առկախ մնաց։ մինչև որ 1887 մայիսին Տրապիզոնի առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեան պատրիարքարանի կողմանէ լիազօր իշխանութեամբ յղուեցաւ ի Տարօն, Ս. Կարապետի վանահայրութեան և Մշոյ առաջնորդութեան գործերը բարեկարգելու։ Այդ նպատակին իբր միակ ճանապարհ որոշուեցաւ երկու պաշտօնները միացնել ըստ հին սովորութեան նոյն անձի վրայ։ և այսպէս ալ կարգադրուեցաւ և նոյն ինքն Սրուանձտեան եպիսկոպոս վանահայր—առաջնորդ ընտրուեցաւ միաբանութեան և ժողովրդեան կողմանէ։

Այդչափ ինչ Ս. Կարապետի վրայ վարչականութիւններ տալէ յետոյ, պէտք է որ նիւթականին վրայ ալ խօսինք։

***

ԱԶԳԱՑԻՆ

Պարոնից Արեգակնափայլ Նասրէտտին շահի առ Հայ ազգն ունեցած սիրոյ և շնորհաց իբրև մի նոր ապացոյց Իւր առաջին աստիճանի Ն. քանշան (Իւրպատկերն ականակուռ շրջանակի մէջ) շնորհել է ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթուղիկոսին՝ ձեռամբ Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի։

Նորին գերապատուութիւն Գրիգորիս Արքեպիսկոպոսն անցեալ Օգոստոս ամսոյ 29ին ժամանելով ի Ս. Էջմիածին՝ յայտնեց

Նորին Վեհափառութեան այս արքայական շնորհն. ուստի Վեհ. Հայրապետն Օգոս. 30-ին Իւր մօտ հրաւիրեց Սինոդի անդամ Գեր. եպիսկոպոսներին, որք իրազգաց լինելով իւրեանց շքանշաններով և պանակէներով զարդարուած ներկայացան ընդունելութեան դահլիճում Նորին Սրբութեան. ապա ներկայացաւ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս՝ հիւրընկալ արժ. Ղեւոնդ վարդապետի առաջնորդութեամբ Շքանշանն արծաթեայ սկուտղի մէջ ի ձեռին հրովարտակի հետ, մատոյց Նորին Վեհափառութեան, և ասաց. Աստուածապատիւ հոգեւոր Տէր, ես այսօր երջանիկ եմ՝ որ բաղդ ունիմ ներկայանալ Ձեր Վեհափառութեան և ի կողմանէ Նորին Արեգակնափայլ Շահին մատուցանել Իւր ողջոյն առ Վեհափառութիւն Ձեր և ի նշան Իւր սիրոյ առ ազգն Հայոց, որոյ եկեղեցւոյ Գլուխ հանդիսանալու արժան աւուրեալ է Ս. օծութիւն Ձեր, ընծայել Ձեզ սոյն արքայական Շքանշանն և հրովարտակն։

Նորին Վեհափառութիւն յայտնեց իւր շնորհակալութիւնն առ արեգակնափայլ Նասրէտտին Շահն, որ Իւր կայսերական շնորհն ընդ միշտ ցոյց է տուել Պարսկաստանում բնակող հայ ազգին. և այս շնորհն ևս համարվում է առ համօրէն ազգն, և ասաց. Ես ընդունում եմ այս արքայական պարգևը իբրև հաւաստիք այն ամէն շնորհաց որ ինչպէս Իւր նախնիք նոյնպէս և Ինքն ընդ միշտ քաղցր ակնարկութեամբ հովանաւորած են իմ սիրելի ազգին՝ որ ի Պարսս. կընդունեմ այս պարգևն իբրև նշան իւր խնամոյ որ ցոյց տուած է Դավրիժու, Թեհրանայ և Նոր Ջուղայի հայ դպրոցաց յառաջադիմութեան նուիրելով նոցա արքունի գանձարանից մշտնջենաւոր տարեկան թոշակ, և ապա բարեմաղթեց Նորին Արեգակնափայլութեան և ժառանգին և միւս որդւոց երկար կեանք, նոյնպէս և բոլոր նախարարաց համար, ապա Գեր. ընծայաբերն ասաց. Թոյլ տուէք ինձ Վեհափառ Տէր, համբուրել Ձեր Ս. Աջն և շնորհաւորել. համբուրեց Աջն, և ապա Գեր. անդամք Սինոդի սկսեցին մի առ մի համբուրել և շնորհաւորել։